



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

4691

9(47.925)

C-18

1878



13531

9(47925)

6-18  
300

1536



ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԸՆԳԳԻՄ ԳՐՈՒԹԵԱՆ ՔԱ  
 ԼՈՒՍՏ ՇԵՄԱԶԱՆԵԱՆԻ ՈՐ ԱՐԱՐԱՏՆ ԼԻՍ  
 ԳՐՈՒԹԸ ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՈՑ ՍՈՅՆ ԱՄԻ ՏՊԵԱԼ ԷՐ:

Երարանս ամազրի ներկայ ամի փե  
 արվարի անտրակումը, որ հրատարակվում է  
 Սուրբ Էջմիածնումն, տեղի է տուած Գալուսա  
 Ներմազանեանի յօդուածին, որ բոլոր բովան  
 դակութեամբը յարձակվում է ինձ վերայ:  
 Ինչպէս ինձ, նմանապէս և շատ քաղաք  
 ներումը, մանաւանդ Քիֆլիսումը բնակւող հա  
 յերից շատերին յայտնի է Գալուսա Ներմա  
 ղանեանը, որի բաղմատեսակ խաւարանս  
 գործքերի համար Քիֆլիկոյ համարուեստական  
 քը քարտքանկ արին նրա տունը և որ իրա  
 գործակցաց և խորհրդակցաց հետ միասին մա  
 ղապուրծ եղաւ վրէժննդիր ժողովորդեան ձե  
 քից, փակելով և թարսելով քաղաքական բան  
 ասի բերդումը:

2004

Այդպիսի մարդուն եւ պատասխանել ան-  
 դամ ամօթ կ'համարէի, յիշելով Սողոմոնի խրա-  
 տը՝ մի տար պատասխանի... Բայց աչքի  
 առաջըր ունենալով նախ այն, թէ մի գուցէ  
 զանուին միամիտ անձինք, որք չձանաչելով այդ  
 մարդուն, հաւատ ընծային զորա խօսքերին, և  
 երկրորդ այն, թէ այդպիսի մարդոյ հեղինա-  
 կութիւնը տեղի է ստացիլ ձերարատ ամսա-  
 դրումը, եւ հարկաւոր եմ համարում մէկ քա-  
 նի խօսքով մերկացնել հեղինակի չափազանց  
 սուտ թիւերը և այլոց ապա թէ չէր վայելե ձե-  
 րարատ ամսագրոյն տեղի տալ իրա էջերումը  
 այդպիսի յօդուածին, որ չէ խնայում և ցան-  
 կանում է արդարանորել մասնաւոր և անմահ  
 ներսէս, Վաթուղիկոսի անունն, որի գործքն  
 յայտնի են քոչորոջ խարհքին և ունին մնալ  
 անջինջ յաւիտեանս զմայր միջոց քննել  
 Գառերին յայտնի է որ յաւիտենական  
 յիշատակած արդեանի ներսէս Վաթուղիկոսը  
 շատ սիրում և յարգում էր յօդուածի հեղե-  
 նակի հօրը, Յարութիւն Ներմազանեանին, և  
 շատ գործքի էր յանձնում նրան, երբ որ վե-  
 ճակաւոր առաջնորդ էր Վրաստանումը։ Ամեն-  
 քին յայտնի է նմանապէս, որ երբ ներսէսը

Վաթուղիկոսացաւ և ըստ մեծի մասին լնակ-  
 վում էր Թիֆլիզումը, այն ժամանակն այդ  
 Գառուտ Ներմազանեանը գտեալ ստէպ երթեւե-  
 կում էր նրա վեհարանումը և ամենայն տեղ  
 փառաբանում էր նրա անունը և քարոզում էր  
 նրա մեծագործութիւնքը։ Վերջապէս այն էլ  
 յայտնի է շատերին, որ Գառուտ Ներմազա-  
 նեանը կարծելով թէ կարող է գրաւել և ժա-  
 աանգել ներսէսից, նոյն սերը և յարգանքը,  
 որնոր վայելում էր նրա հայրը ամենայն հը-  
 նարքնիքով աշխատում էր ձեւանալ նրա առա-  
 ջըր ազգասէր և անձնանուէր եկեղեցւոյ և  
 ազգի օգտին։ Բազմափորձ ներսէսը չէր խաբ-  
 վում և իրա մարդաձանաչութեան սրտոնս աչ-  
 քերովը թափանցում էր նրա սիրտը և հոգին,  
 սակայն միտրեալ Գառուտը յոյսը դնելով իրա  
 ձարտարախօսութեան վրա, կարծում էր, թէ  
 տիրել է արդէն ներսէսի հանձնարի վրա, վասն-  
 որոյ և առաջարկելով նրան զանազան զաղա-  
 փարներ Պարսկաստանի հայերի համար թաւ-  
 րիղումը և Թէհրանումը ուսումնարաններ շե-  
 նելոյ մասին, և յանձն արնելով այդ գաղա-  
 փարների իրազործելը, աշխատում էր ստանալ  
 նրանից մինչև քսուստուն հազար ութըլի ար-

ճաթ: Բայց ներսէսը չը խաբուեցաւ և չը տուեց  
 նրան այդ գումարը: Եւ ինչպէս ըստ  
 Վարդանանի վերաբերեալ ի վեր թաւ  
 պայեց Գալուստ Երեմիականի անձնական հա-  
 շիւները, ըստ որում այդ գումարը ձեռք բերե-  
 լով նա յոյս ունէր վերականգնել Պարսկաստան  
 նուա՛ր իրա վաճառականութեան խճճուծ գործ-  
 քերը: Այնուհետև նա Գալուստ Երեմիական  
 նեանը փոխեց իրա ընթացքը: Հեռացաւ վե-  
 հարանից, սկսեց ամեն տեղ պարտաւել ներ-  
 սէսին և դարձաւ անհաշտ շնչին թշնամի նրան  
 և նրա ազգականներին: Եւ ինչպէս ըստ  
 Վահ իսկական պատմաւոր այն ամենայն  
 զբաղարտութեանց, որ նա աշխատում է բար-  
 դել հանդուցեալ ներսէս Կաթողիկոսի վրա:  
 Երա անգոր յսակալութիւնը, ներսիսի կենսա-  
 գրութեան միջուկը, ուրիշ նիւթ չգտնելով իրա  
 մաղծը վրէն թափելոյ համար, աշխատում է  
 ստորացնել հանդուցելոյ ազգաբանութիւնը և  
 շինծու ներկայացնել այն գաստութիւնը, որը  
 ապացուցարում են նրա և նրա արիւնակցաց  
 ծագումը կամ անարական տոհմից, և միւս  
 կողմից այլ կողմի ստույգը հրութիւններով և  
 յորում ծներով նա կամենում է համընտել մէկ

քանի բարձր աստիճան հոգեորական անձանց,  
 որք աշխատում են ամենայն կերպիւ միտով  
 ներսիսի անմահ անուշը և նեմացնել նրա  
 մէծագործութեանց յիշատակը, և զո՛նցէ այդ  
 հնարքներով և այդ հոգեորականաց ձեռքով  
 ստանալ Սուրբ Աթոռի գանձարանից ո՛ր և իցէ  
 գումար, որ և իցէ նորա հնար դադա-  
 փարի իրագործելոյ պատրուակաւ, իրա ներ-  
 կայ քայքայումս վեճակը փոքր ինչ բարեւո-  
 լելոյ համար: Եւ այն ժամանակ զի իր  
 Երկու յիշեալ նպատակներին հասնելոյ  
 համար, Գալուստ Երեմիականն չէ ինչպէս և  
 մինչև ցայսօր էլ չէ ինչպում իրա բոլոր ոյժը  
 և ճիգը փորձ և անմտեայ և հանդէսի Վ  
 համարումը սպա՛ծ ներսէս և կաթողի-  
 կոսի կենսագրութիւնը թեպէտ ստորա-  
 գրած է իրր հեղինակութիւն պ. Երիցեանի,  
 բայց էականապես ներսիսի ազգաբանութեան  
 վերաբերեալն յօրինումս և ձու՛նը է Գալուստ  
 Երեմիականի մազձու հոգւոյ, ըստորում  
 թ՛որձ իւր գուրա պայեց տակաւին մի տարի յա-  
 տաջ այդ պարտը մի քրէական գործի պատ-  
 ձառաւ զամսուելով Երեմիականի պատահում է  
 այնտեղ Աշտարակեցի պատուաւոր անձին, որի

անունն է Բեկլար Եուխեանց, զանազան հար-  
ցեր է առաջարկում նրան Ներսէսի ծագմանն և  
ազգատոհմի վերաբերութեամբ, աշխատելով  
ընդ նմին համոզել նրան, թէ Ներսէսի ազգա-  
տոհմը Կամսարական սերունդ չէ և այլն, ծե-  
րունի Բեկլարը իսկոյն ձանաչելով դրա դիտա-  
կալ հոգին բաց է ի բաց հերքում է նրա կատ-  
կածանքը և ազայոց ցանում է ասելով թէ «ե-  
թէ մենք ծերունիք յաշտարակեցիքս լուենք,  
քարինք կաղաղակեն դրա ծագման ձմարտու-  
թիւնն» Արեմն պարզ է արդէն, որ յիշեալ  
տպագրած յօդուածը բաղկացած է Գալուստ  
Ներմազանեանի գրուածքներից և նրա մտղծու  
արտումը յղացած և ձևակերպուած նիւթերից։  
Արարատ ամսատետրի 27. երեսումը Գա-  
լուստ Ներմազանեանը, խօսելով մեր ազգա-  
տոհմին շնորհած Փարմանների վրա, աշխա-  
տում է ազայոց ցանել նրանց շինճու լինելը,  
սակայն նրա յառաջ բերած մտացածին ապա-  
ցուցութիւնները ստուշի պէս հարկում են հե-  
տեւեալ երկու հրացայտ փաստերի առաջը,  
որք են, նախ, որ 1838 և 1839 թուականնե-  
րումը եւ բնակվում էի Քիշնև քաղաքումը, ա-  
պա ուրեմն չէի կարող ուղարկել մեր Ֆեր-

մանները Թիֆլիզից Գալուստի երեց եղբայր  
Վարդանին Քաւրիզ և խոստանալ նրան 100  
ոսկի այնտեղի Հիւպատոսարանումը վաւերաց-  
նելոյ համար և երկրորդ, որ այդ Ֆիրմանների  
անկատկածելի վաւերականութիւնը արարգ երե-  
ւում է նրանց վրա գրուած հետեւեալ մտկա-  
զրութիւնից, որ արտագրում եմ այստեղ իրա  
թարգմանութեամբ զըսարտողը պուշ աչքերին  
մտեցնելոյ համար „Его превосходительство  
г. Военной Губернаторъ отъ 8 Августа  
1841 года за № 420 препроводя въ Гру-  
зину—Имеретинское Дворянское Депута-  
тское Собрание означенные грамоты, при-  
совокупилъ объ отъѣзвѣ полномочнаго Ми-  
нистра въ Персіи Генераль—Манора Дю-  
гамеля, что по тщательномъ разсмотрѣнн  
ихъ Сановниками и Мирзами Персидскаго  
Правительства онѣ найдены неподлежа-  
щими ни какому сомнѣнію, ни по слогу,  
ни по бумагѣ, ни по черниламъ, и прило-  
женныя къ нимъ печати суть точно по-  
длинныя печати тѣхъ особъ, отъ имени  
которыхъ писаны грамоты.“ Թարգմանու-  
թիւն. “ Եորին գերազանցութիւն պ. Զինուո-

բական Նահանգապետն յՑին օգոստոսի 1844  
 Համար 240. առաքելով ի Վրաստանի և Իմէ-  
 րէթի ժողովն պատգամաւորաց յիշեալ Հրո-  
 վարտակս, յարակցեաց զպատասխանագրութիւն  
 Հիւպատոսին (իրաւատեք Նախարարութեան)  
 գեներալ-մայեօր Գիւղամօլի, թէ յեա մանրա-  
 խոյզ վերազննութեան նոցին ՚ի ձեռն երևելի  
 մեծաւորաց և միողայից Պարսկական տէրու-  
 թեան, նոցին երևեցան աննթարկելիք որ և  
 իցէ կասկածանաց ոչ ըստ սնձցն, ոչ ըստ թրղ-  
 թոյն, ոչ ըստ թանաքին, և գրոշմեալ ՚ի նմին  
 կնիքք են իսկապէս կնիքք այնոցիկ անձանց,  
 յորոց անուանէ գրեալ են Հրովարտակքն այ-  
 նոքիք: Եւ յժմ Գալուստ Ներմազանեան կ'ամա-  
 չես թէ ոչ քոյ ստախօսութեամբ: Թէպէտ այս  
 մասին և քանի պարբերութեանց վերայ իմ մերձ  
 ծանօթ բարեկամքս ինձ խարհուրդ էին տալեն  
 դատաստանաւ պահանջել այդ ստախօս յօ-  
 զուածի մասին, բայց ես ինձ անպատիւ համա-  
 րեցի դորձ ունենալ այնպիսի . . . մար-  
 դոյ հետ:

Ես երկու փաստերից պարզ երևում է  
 ինչպէս Գալուստի ստախօսութիւնը, նայնպէս և  
 և այն, թէ մեր ազգատոհմին շնորհաճ Փար-

մանը չէ կարելի համարասել այնպիսիներին,  
 որոնց մասին առանձին ծանօթութիւն է գրել  
 խմբագիրը, և որոնք ներկայ վեհափառ Հայ-  
 րանպետի օրօքը ձեռք են բերուել և պատա-  
 ռուել: Մեզ շնորհաճ Փարսկաները վաճերա-  
 կան են և ընդունած, սակաւ ուրեքն չեն են  
 թարկելի ոչ ձեռք բերողն երբի և պատ-  
 տառողն երբի և ոչ սոցա նման Գալուստ  
 Ներմազանեանի դատողութեանը և քմայր: Եւ  
 Նա Վրգարտութեամբ պարծեցողներին վաղուց  
 արդէն պախարակել է Ռուսաց հին և երևելի  
 առակախօս կրիլովը, նմանեցնելով նրանց այն  
 սագերին, որք իրանց ճիշ բարձրացնելովը ա-  
 զլատեցին Հռովմ քաղաքը, և որոնց սերունդքը  
 պարծենալով կրկնում էին **Наша предки  
 РИМЪ СПАСЛИ**—Մեր պապերը Հռովմ ազատե-  
 ցին: Եթէ Գալուստ Ներմազանեանը նախան-  
 ձում է, թէ ընչի՞ ենք կրում մենք Վա մսա-  
 ը ա կ ա ն Ե ա հ ա զ ի զ ե ա ն տոհմնունը,  
 որն որ ինքը չունէ, թող միտիթարուի այսու-  
 հետեւ լսելով մեզանից, թէ այդ տոհմնուն-  
 նով մենք չենք ցանկացել և այժմ ևս չենք ցան-  
 կանում թաւազ կամ Կնեազ համարուելը  
 ըստ որում մենք համոզուած ենք, թէ առանց

այդ տոհմանուանն էլ մենք և մեր նախնիքը և մեր ներկայ սերունդը միշտ վայելել են և վայելում են ամենայն տեղումք և ամենայն հասարակութեանց և ընկերութեանց միջումք ընդհանուր յարգանք: մեր գործքովը և մարդավայել ընթացքովը, և ոչ թէ կամ արական տոհմանուամբ: Ասկայն նոյնը չէ կարող ոչ թէ ասել այլ և մտածել անդամ իրա սննդին համար: Գալուստ Երմանգանեանը, ըստ որում նա իրա խաւարային գործքերովը վաղուց զգուած է ժողովրդեան յարգանքից և բողոքովին անուարեկ է թիֆլիզումը և ուրիշ քաղաքներումը: Ասածին ապացուցանելոյ համար հարկաւոր եմ համարում յառաջ բերել այստեղ մի քանի փաստեր, որք են:

1. Գալուստի հայր Յարութիւն Երմանգանեանը շատ արժանատի և պատուելի անձնէր և թիֆլիզում սարսակելով անբիծ և արդարաւիասակ վաճառականութեամբ, վայելում էր հասարակութեան յարգը և պատիւը և պատկառելի է ամենքին, բայց տեսնելով իրա Գալուստ օրդոյ պարսաւելի գործունէութիւնը և արարմունքը, ենթարկուեցաւ կաթուածքի

(գամբուլթեան) և վախճանուեցաւ: Այս մասին բոլոր թիֆլիզեցիք կարող են վկայել:

2. Արշակունի աղայ Վարդանից Գալուստ Երմանգանեանը պարոք էր առել 35 հազար մանէթ 1845 թուականին, իբր թէ վճարէ պարտատեարց և կարողանայ ազատուել սնանկութիւնից (բանկրօտութիւնից): Արշակունեոյ մեռնելուց յետոյ Գալուստի մորհակը պատահամբ գտնուեցաւ հանգուցեալ Արշակունեոյ թղթումը և հասաւ . . . . սկսեցին պահանջել այն ժամանակը . . . . ստացադրեր . . . . իբրու թէ այդ գումարը հատուցած է և այդ գումարի մեծ մասը կրանց:

3. Խորամանկ հնարքներով և ուրիշ իրա նման մարդկանց միջնորդութեամբ կոռսակցութիւն սարքելով Գալուստ Երմանգանեանը ընտրուեցաւ երբեմն թիֆլիզոյ քաղաքապետ: Այդ պաշտօնումը նա այնքան վնասներ հասցրուց քաղաքին, մինչև որ յուսահատուած բնակիչքը և համարուեցատականքը խուռն բազմութեամբ յարձակուեցան դորա տան վրա, և քարուքանդ արին: Փոխանակ զղջալոյ իրա չար արարմունքից և զգոտանալոյ այդ վնէժատութիւնից, Գալուստ Երմանգանեանը բողոքեց կառավարու-

Թիֆլիզեացոց վրա և մատնեց երևելի քաղաքացիներէց շատերին, որոց ոտի պճեղն չարժեք Գալուստն, ի թիւս որոց և բարձր աստիճանաւ որ Կերաստախ Գրիգոր Իզմիրեանին, իբրու թէ նորա են եղել զրոգոք և պարսպազուխք մամբոխին: Այլ քննադատու թեան միջոցմբ պ. Իզմիրեանը տուեց կոմմիտիային ի 29 Յուլիտի 1865 ՎՊ բացատրութիւն որի միջումբ շատ լաւ նկարագրել է Գալուստի յատկութիւնքը՝ որոնք են՝

ա. իրա (Գալուստը) ընտանեաց միջումբ գործով գերդաստանատէր նա այնչափ բռնարարոյ և զգուելի է հանդիսացել, մինչև որ նրա կրտսէր եղբայր Վեդրդ Ներմազանեանը, որ իրա բարեմասնութիւններով վայելում է ծանօթերի սէրը և յարգը, բացարձակ գորում էր թիֆլիզումբ, թէ Վալուստն յարժանի է սպանման, ըստ ուրում մեր հօրը դա սպանեց իրա վարմունքով և այլն:

բ. Իորա ծնող մայրը և մեծ քոյրը գորա անվերջ կռիւներից կենսամաշ լինելով, վախճանուեցան խռոված և առանց հաշտուելոյ: Իրա փեսայ բարձր աստիճանաւ գերամեծար Վասիլ Խօջայեանի հետ, նաև իւր մօր եղբօր որդ-

ւոյ բժշկապետ զերազանց Զարութիւն Յովհաննիսեանի հետ վաղուց սկսած մինչև ջայսօր անհաշտ թշնամի է:

գ. Իբրև քաղաքացի, դա (Գալուստը) միշտ հանդիսացել է անտանելի հասարակութեան միջումբ, ըստ որում ինչ տեղ և ինչ գործումբ ունեցել է մասնակցութիւն, միշտ սերմանել է այնտեղ հաւակամանք, անմիաբանութիւն, անտեղութիւն և կռիւ: Իրա սնանկութեան միջոցումբ, երբ որ ծառայ էր սակաւին պարոն Խալաթովի մօտ, մեկ ողորմելի Պարսիկ պահեղև դորա գժոխային մեքենայագործութեան, ըստ որում դա ապստամբական թղթեր յօրինեց կառավարութեան դէմ և ծածկաբար թաքցրուց այն թղթերը խեղճ Պարսիկ տանը և յետոյ մատնեց Ասիականին (\*):

Երաճուրանտների և Վուլեանցի հետ ընկերութիւն ունենալով, նրանց միջնորդութեամբ ծանօթացաւ մէկ պարսիկ հպարտակ վաճառականի հետ և յետոյ դանական օգտա-

(\*) Նոյնը եւ ինձ վրա կամ էր տունել, բայց սնցազոզեցաւ, որոյ կենդանի վկայք են: Բարձր Սրբազան Արքեպիսկոպոսն, զերաստիման Նիկողայոս Տէր Յոզեփանն եւ զնետրալ Իտաղմէվն (այժմ գալիճանետոյ):

կար նախագիծներ առաջարկելով, ստացաւ նը-  
րանից մեծ գումար և սառը քարին նստեցրուց  
խեղճին, այլ ողորմելի Նահմուրազեանցը Գա-  
լուստի ողորմութեամբը մի քաւական միջոց  
քանտարկուեցաւ:

Վերջինն նորա (Գալուստի) ի Թաւրիզ  
և ի Թէյրան, իրան անտանելի և խարդախ  
վարմունքովն այնչափ երկպառակութիւն սեր-  
մանեց ժողովրդեան մէջն, որ կարգադրութեամբ  
մեր Հիւսիսաստին շղթայակապ վերադարձրին ի  
Թիֆլիզ:

Այժմ այս պատուելի մարդն, որոյ չարա-  
կամ և վնասակար գործքերն բոլորեցունց է յայտ-  
նի, և որն որ իրա քաղաքագլուխ ժամանակին  
Թիֆլիզումն սկսել էր ստորագրութիւն ժողո-  
վել, ընդդէմ հանգուցեալ Մասթէոս Կաթու-  
ղիկոսին, — այժմ, ասեմ, խորամանկ դիտաւորու-  
թեամբ իբր իրան ցուցանելով հարազատ առ  
հանգուցեալ Ներսէն Կաթուղիկոսն, Արարատ  
լրագրի միջումը, երեւ ՂԱ. բերում է ծերունի  
Հ. Գարրիէլ Պատկանեանցի հրատարակուած  
յօդուածը «Արշալոյս Արարատեան»  
միջոցով, այս վերակոչումներն ազգի իրա-  
ւանց հիմն խախտող ազգամեաս, դաւա-

ճան, յաւիտեան ական վնաս ապարտ,  
Հայոց եկեղեցւոյ հիմն դրդող,  
Արղութեանց Յովսէփ Կաթուղիկոսի  
թիւնաւորող (\*) Նեստոր սասանայ խա-  
բող Աշտարակեցի և այլն: Հասկանում եմք,  
Գալուստ ներմագանեան, թէ ինչ հոգւոյ աէր  
ես, և ինչ մտօք ես յիշել Արարատումն, որ  
հաճոյանաս... և կատարեալ յուսով եմ, որ  
ծերունի Հ. Գարրիէլ Պատկանեանն ինքն հեղքէ  
այս դրածն և թող չտայ առանց պատասխա-  
նելոյ: Բաւական համարելով այսչափ միայն,  
ես կեթարկում եմ ամեն բարեմիտ, ճմարաա-  
սէր և անուշամիտ անձանց դատողութեանը և  
վճռոյն, թէ արդեօք արժանի է պատասխանեոյ  
այբալիսի անձին գրութեանը: Կնչպէս վերևումը  
ասացի, ես չէի կամենում բոլորովին պատաս-  
խանել և եթէ յանձն առի միայն այսչափս  
գրել, այն էլ գրեցի միմիայն վերևումը բացատ-  
րած երկու պատճառներից ստիպուած: Եւ  
յիշաւի, եթէ լաւ մտածեմք, արդար և ար-  
ժանի չէր և չէ յօդուածագիրը այս կորձ պա-

(\*) Գովսէփ Կաթուղիկոսն վախճանեցաւ իւր եղորդ Կնիսպ  
Կիկօի տանն, եւ Ներսէսն սղ ժամանակն կործեօր Պօյնս  
իւր կամ յեջմ խոճին: ...

տասխանուցս անգամ, ըստ որում այն մարդն,  
որ իրա փնասակար գործքերովը, ոչինչ նշանա-  
կաթիւն չունէ հասարակութեան միջուկը, այն  
մարդն, որ իրա հայրական սուննի քարուքանդ  
արեց և իրա եղբարցը զրկեց և մի պատառ  
հացի կարօտ թողուց, այն մարդն, որ ոչ սէր  
ունի դէպի իրա արինակիցները և ոչ պատկա-  
ռանք կամ յարգ դէպի հասարակութիւնը, ո-  
րին ապաքախտաբար պատկանում է, այն մարդն,  
որ հայրասպան է ճանաչած... որ 1865 ամին  
պատճառ դարձաւ քաղաքի խռովութեան...  
..... կուլ տուեց 30  
հազար մանէթ արծաթը Արշակունեց... այն  
մարդն, որ երեք կամ չորս անգամ աքսորուած  
է Քաւրիզեց Պարսից կասափարութեան և Ռու-  
սաց Հիւպատոսների հրամաններով խառնակու-  
թիւն և վրդովմունք ձգելու պատճառաւ... այն  
մարդն, ստում եւ, որի շնորհօք մի Պարսիկ  
մինչև ցայսօր կորած է և մի Պարսկահայատակ  
վաճառական դամբվում է յետին աղքատու-  
թեան մէջ, և վերջապէս, այն մադն, որի ձեռ-  
քերն զօրում էր ստորագրութիւն ժողովել իրա  
քաղաքազուլի ժամանակին իբր . . . . .  
Մատթէոս Կաթուղիկոսին... (այ քեզ տոաբօծ),

— այդպիսի մարդուն արժանի չէ ոչ միայն պա-  
տասխանել, այլ մինչև անգամ երեսին նայել:

Աստորոյ և ես բաւականանալով այս  
չափովս, այսուհետեւ ամօթ և անպաաշաճ կը  
համարեմ ինձ դորան և գորա նման անձանց  
պատասխանելը: Թող այսուհետեւ ինչքան և  
ինչպէս կամենայ, դրէ և հրատարակէ, ես պա-  
տասխան չեմ տալ և միայն սառն ա ր հ ա -  
մ ա ր հ ա ն ք ո վ կը նայեմ նրա բոլոր գրու-  
թեանց վրա, այնպէս, ինչպէս բոլոր հասարա-  
կութիւնքն նայում են Արարատ լրագրին, որ  
տեղի է տուել իւր լրագրումն տպելոյ այդ յօ-  
դուածն: Արարատ լրագիրն էլ, փոխանակ  
օգտուէտ յօդուածի կարող է այսուհետեւ հա-  
մարձակ ընդունել և լքցնել իրա թերթերը  
այդպիսի Մէծարգոյ Յօդուածագրի և  
Համբաւաւոր Գրասէրի (\*) անարժան զը-  
րութիւնքը: Բայց տիտոս, որ կ'ձանձրանան ըն-

(\*) Այս տիտղոսները Արարատայ խմբագրութիւնը  
նուիրել է Գալուստ Ներսիսեանին, այն էլ ամսագրոյ „Ա. դ.  
գային“ վերտառեալ բաժնումը: Բայց կարծեմ, որ ներ-  
կայ բացատրութիւնս կարդալոյ յետոյ կը համոզուի, թէ խա-  
րուած է եղել արտարին յատկանիշներից եւ անձնագրու-  
թիւնից:

Թերցողքը և մանաւանդ մեր ողորմելի և խեղճ  
 քահանայքը, որք ստիպմամբ հասարցա-  
 նելով ասրեկան չորս մանէթ, փոխանակ ակրն-  
 կալեալ օգտարեր և հետաքրքրութեան ար-  
 ժանի նիւթերու, շտա անգամ կարգացել են,  
 այժմոյս էլ կարգում են և այսուհետե էլ յա-  
 կանայս ունին կարգալոյ «Արարատ» ամա-  
 գրի միջումը Գալուստ Ներսիսեանեանի և նրա  
 նման անձանց հեղինակութիւնները և գրուածք-  
 ները:

Յարաւիւն Ետնադիւեանց.

Ն. ՆԱՐԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՆԻ  
 Ռ. Ա. Սուղիչնայա Բուժուցանարան  
 7/11 - 1922  
 27 ապրիլ 1878 աւր  
 Մենա, Մասնաւոր Գրախոս  
 ՄԱՍՆԻՅԱՆԻ

Дозволено Цензурою. Тифлиси, 28 Апрель 1878 года.

Типог. Маргаросианца, на Орбелиановской улицѣ, д. № 5

4691

0000735

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0000735

